

Александръ Аннинскій Древніе армянскіе историки, какъ историческіе источники. Одесса 1899. էջ. 133.

Աղգամը Աննինսկի. Հայոց հին պատմիկները որպէս պատմութեան աղբիւր. Օդեսա, 1899.

Հայագիտութեան պատմական—բանասիրական ուսումնասիրութիւնների բաժինը մի նոր գրքով հարստացաւ. Աղ. Աննինսկի իր աշխատասիրութեանը մէջ, քննում է մեր հնագոյն պատմագիրների երկերը, և հոռմական կամ բիւզանդական աղբիւրների համեմատութեամբ մեր ազգային աւանդութեան թերի և անվաւերական գծերն և ջրոյց տալիս. Հեղինակի կարծիքով, Հայաստանի հնագոյն պատմութիւնը ուսումնասիրելու համար, փոխհելի աղբիւրներ են՝ սեպագիր արձանագրութիւնները, յունաց և հռոմայեցոց գրութեանը և Հայաստանի հնագիտական յիշատակարանները. Հայոց անցեալի նախնական շրջանը և արշակունիների պատմութիւնը նախ պէտք է օտար աղբիւրների օգնութեամբ լուսաբանել, և միայն այդ աշխատանքից յետոյ՝ պիտի կարողանանք ազգային աւանդութեան արժանահաւատ կէտերը որոշել.

Այս կարծիքը բանասէրների շրջանում այժմ արդէն գրեթէ ընդհանուր է. նոր եղանակի աշխատանքները գուցէ մօտ ապագայում մեր առջև բաց անեն հին Հայոց քաղաքական կեանքի իսկական պատկերը.

Պր. Ա. Աննինսկու ուսումնասիրած պատմագիրներն են՝ Մար Արաս (կամ Իրաս) Վատինայ, Ագաթանգեղոս, Զենոբ Գլակ, Փաւստոս Բուզանդացի և Մովսէս Խորենացի.

Ժամանակակից բանասէրների մեծ մասը այս երկի մէջ յիշում չեն. պէտք է ենթադրել, որ նորագոյն հետազոտութիւնները հեղինակին անծանօթ են: Այս թերութիւնը պատճառ է եղել, որ Պր. Աննինսկի նորից առաջ է բերում այնպիսի խնդիրներ, որ արդէն արծարծուած և մասամբ պարզուած են. Հեղինակը Ագաթանգեղոսին և Փաւստոսին ազգով յոյն է կարծում, որ աւելի քան կասկածելի է (Տես՝ Հր. Եակ. Տաշեան. Ուսումնասիրութիւն Ագաթանգեղեայ գրոց. Վիեննա. 1891. H. Gelzer, Die Anfänge der armenischen Kirche. Ber. d. Sachs. Gesell. d. Wissen hist.—philol. Classe. 195. էջ 109—Ստ. Մալխասեան. Ուսումն. Փ. Բիւզանդի պատմութ. Վիեննա. 1896):

Պր. Աննինսկի ենթադրում է, որ Ագաթանգեղոսի այժմեան հայերէն օրինակը թարգմանութիւն է մի հին յունարէն ընագրից, որ յետոյ կորսուել է (?). իսկ այժմեան յունարէնը թարգ-

մանուած է հայերէնից (Տես՝ Տաշեան. Ագաթանգեղոս.).

Ուսուցչապետ Գր. Խալաթեանի «Զենոբ Գլակ, համեմատական ուսումնասիրութիւն. Վիեննա. 1893» աշխատասիրութիւնը նոյնպէս ծանօթ է Հեղինակին. Ասորի եպիսկոպոսի «պատմութիւն Տարօնոյ» գրութեանը զիջաւոր մասը պր. Աննինսկի վաւերական է համարում, իսկ սկիզբը և նամակները յետագայ դարերի յաւելումն է, սակայն պր. Խալաթեանի ուսումնասիրութիւնից յետոյ՝ բանասէրները համաձայն են, որ այդ երկը պատմական արժէք չունեցող վիպագրութիւն է:

Նորագոյն հետազոտութիւններից գրեթէ անկախ՝ պր. Աննինսկի հին պատմագիրների ժամանակը որոշում է այսպէս՝ Մովսէս Խորենացի VI դար (սկզբ), Ագաթանգեղոս IV դ. վր.—V դ. կս., Փաւստոս V դ., Զենոբ Գլակ IV դ.:

Ուսուցչապետ Վարդիւրի փաստերը, որոնց վրայ հիմնուելով բանասէրների մի մասը Մով. Խորեն. VII-VIII դ. պատմագիր են ընդունում պր. Աննինսկի թերի է գտնում և ինքը Մով. Խորեն. VI դարի սկիզբն է գտնում, իսկ Մար Արաս (Իրաս) Վատինայի պատմութիւնը IV կամ V դ. (Յ. Բ.) գրութեան է համարում. Սողոմոնը (III; 16) յիշում է Եփրեմ՝ Ասորու Մարաս Ազգաս անունով երեւելի աշակերտներին, և հեղինակը մի յանդուգն ենթադրութիւն է անում, թէ գուցէ սոքա Խորենացու Մար Արասի հետ մի որեւէ կապ ունենան:

Պր. Աննինսկու աշխատութեան այն մասերը, ուր նա փորձում է պատմագիրների անձը, ժամանակը կամ պատմական արժէքը ստուգել, շատ քիչ նորութիւն են պարունակում: Սակայն գրքի այն հատուածները, որոնց մէջ հեղինակը, հոռմական կամ բիւզանդական աղբիւրների օգնութեամբ, աշխատում է մեր պատմագիրների սխալներն ուղղել և պատմական եղելութիւնը ճշգրել, գիտնական արժէք ունին, և բանասէրների ուշադրութեանը արժանի են, թէպէտ և յարուցուած խնդիրները գրեթէ բոլորն էլ վիճելի են. Ըստ Խորենացու Տրդատ III դահ է բարձրանում 287 թ. Յ. Բ., որ Դիոկղետիանոսի կայսրութեան երրորդ տարին է. հեղինակը կարծում է, որ այս անդեկութիւնը չի հաստատում Ամմիանի, Մամերդի, Եւսեբիոսի և Սողոմոնի վկայութիւններով: Ըստ Աննինսկու Տրդատ III-ի թագաւորութեան ժամանակը չորրորդ դարի սկիզբն է, մօտաւորապէս՝ 302-344 (?), իսկ հայոց դարձը 315 թ. յետոյ (?), Պրորոս կայսրը (276—282) պարսիկների հետ հաշտութեան գաշիք չէ ունեցել. Խորենացին Պրորոս կայսրին չփոխել է Սիկորիոս Պրորոսի հետ, որին Դիոկղետիանոս 297 թ. բանակցութեան համար ուղարկել էր՝ Ներսիս արքայի մօտ. Հեղինակին

կարելի է առարկել, որ բանասերները Պրոբոս կայսրի դաշնադրութիւնը ստորագրել են համարել Vopiscus-ի վկայութեան վրայ հիմնուելով (Vopiscus. Probus. 17.):

Յ. Մ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ԲՆԱԿԱՆԱՅՈՒԹԻՒՆ ԵՆ ՈՒՍՈՒԱՆՔ)

(Շարունակութիւն) *

Ե.

ՀԱՅԿԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Առասպելի կապուելն աշտարակաշինութեան հետ.— Թէ այդ հին ժողովրդական գրոյցն ինչպիսի կերպարանք է ունեցել՝ զբժուար է ասել: Մեր ունեցածը գրական մըշակութիւն կրածն է: Աւելի ևս դժուար է ասել այժմեան միջոցներով, թէ արդեօք հենց ժողովրդի մէջ հայ ազգի ծագումն այդ հայկ հսկայի անուան հետ կապուած է եղել, թէ՞ ժողովրդական գրոյցից օգտուողի սեպհական գիւտն է այդ: Եւսմենայն դէպքս, գրողի մտքը շատ պարզ կերպով երևում է յատկապէս հայ ազգի ծագման հնութեան և աշտարակաշինութեան հետ կապուած լինելու նըկատմամբ:

Ազգերի և լեզուների սկիզբն աշտարակաշինութեան հետ էր կապուած ժամանակի հասկացողութեամբ՝ սուրբ Գրքին հետեւելով: Խորենացին ևս այդպէս է վարում իւր մեկնութեան մէջ պարսից ազգի սկզբնաւորութեան և Բիւրասպի մասին խօսելիս: «Ասացեալն ի նոցանէ Բիւրասպի Աժգահայ՝ առ Նեբրութաւ նախնի նոցա: Բանդի ի րաժանել լեզուացն ընդ ամենայն երկիր . . . պիտաւորք և ցեղապետք որոշեալք զիւրա-

քանչիւր սահմանս ժառանգեցին . . . Սա (Բիւրասպ) . . . զցեղապետութիւնն ազգին իւրոյ ունէր հնազանդեալ Նեբրութայ» (Ա. Գրքի Բ. յաւելուած):

Սոյնպիսի մի շինովի բան է, հարկաւ, Հայոց ազգի ծագումն աշտարակաշինութեան հետ կապելը: Եւ, ինչպէս երևում է, Խորենացու արածն է այդ: Եւ որպէս զի այդ յերկրումին հաւատ ընծայուի, կարեւոր է համարում առաջուց յայտնել իրենից թէ Բէլը Ս. Գրքի Նեբրութին է¹⁾: Բայց նա ոչ մի հիմ չունի այդ ենթադրութեան համար, այլ գրում է լո՛ւ խօսքով. «ԶԲէլայ՝ առ որով նախնին մեր Հայկ, բազումք բազում ինչ այլ ընդ այլոյ պատմեն: Բայց ես ասեմ՝ զԿոռնոսդ անուն եւ զԲէլ՝ Նեբրութ լեալ»²⁾:

Ինչպէս երևում է, Խորենացու աղբիւրի մէջ այդ նոյնացումը չէ եղել: Եւ այս հաւանական է թւում նաեւ այնու, որ Անանուհի մէջ ևս,— թէպէտեւ Աստուածաշնչի մի քանի ձևերից ու նկարագիրներից օգտուել է գրողը,— Բէլը Նեբրութի հետ նոյնացած չէ: Այնտեղ ասած է աշտարակաշինութիւնից յետոյ. «Ի վերայ առն ընկերի՝ առնորն Տիտան, յորում առաջին թագաւորեաց ի վերայ երկրի»: Ուրեմն ընկերի հետ կաւում է Տիտանը, որև առաջին թագաւորոն է լինում երկրի վրայ, եթէ միայն «յորում առաջին թագաւորեաց . . . չհասկանանք, ինչպէս «յորում» ձևը պահանջում է, թէ «որի ժամանակ» այսինքն կուռի ժամանակ, առաջինը, այսինքն ընկերը, թագաւորեաց . . .

1. «Յայտարարութիւն սակաւոյ՝ քի շատ արտաբանցն սացեալ է Բիւր. շատ աստուածայն բանից ձըշմարտութեամբ նարտք է» (Ա. Ե.):

2. Խորենացու պատմադրանքի մէջ՝ «որպէս եւ զի պացախի բունն հաւասար Մովսիսի, Եփեսոս, արեգակն, Կոռնոս, որ է Քամ, Քուշ, Նեբրութ . . . շատ շատ՝ կարող էր, ժամանակի հասկացողութեամբ, Կոռնոսին նոյնացնել Նեբրութի հետ: Իսկ որպէս զի Բիւր կը Նեբրութի հետ նոյնացար, հարկաւոր էր գտնել, որ Կոռնոս ևս Բիւր նոյնացած լինէին: Բայց այդ լկայ: Հմմտ. Ա. Ե. «զնեբրութ, որ է Բիւր»:

3. Գ. Խալաբեանը (Եր. 56) բարգմանած է յոգնակի ու մոծարաբայ, միևնույն ընդհանր ձևի եզակի է՝ ընկերի: